

ԵՐԻԱՆԴ ՕՏԵԱՆ *)

Ծնած է 19 Սեպտեմբեր 1869ին, Պոլսոյ Ենիգիւղ արւարձանը:

Գեղեցիկ մանուկ մըն էր եւ ուշիմ: Դպրոց չի յաճախեր, մասնաւոր դասեր կառնէ տան մէջ: 1878ին կը ճամբորդէ Ֆրանսա եւ Իտալիա, Գրիգոր Օտեանի հետ, որ իր հօրեղբայրն էր: Յետոյ պահ մը կը հաստատուի Ճուրճուլայի մէջ (Ռումանիա), ուր ղրկւած էր հայրը իբրեւ օսմ. հիւպատոս: Քանի մը տարի վերջը կը վերադառնայ Պոլիս եւ կը մտնէ Պէրպէրեան վարժարան, ուր կը հրատարակէ ձեռագիր թերթ մը, Վառարան: Ռ. Պէրպէրեան կը խափանէ Օտեանի թերթը, բայց նոր մը կը հանէ ան, նոր անունով մը դարձեալ, Անհաշտ: Կը շարունակէ նաեւ մասնաւոր դասեր առնել Գրիգոր Մարգարեանէ, Տիւպիւլայէ եւ Տիւփրէէ:

1888ին կը ճամբորդէ Անտիոք, Գէորգ Աւանի հետ, որ մօրեղբայրն էր: Վերադարձին, 1893ին, կը մտնէ Հանրային Պարտուց Վարչութեան մէջ: Այդ շրջանին կսկսի աշխատակցիլ Մախիւն, Մանգուլէի Էփեֆարին, Արեւելիքին: 1894ին կը մտնէ Հայրենիքի խմբագրութեան մէջ, ուր կաշխատի մինչեւ 1896 Օգոստոս 24, երբ, Պանքայի Դէպքին պատճառով, կը հեռանայ Պոլիսէն: 6-7 ամիս կը մնայ Աթէնք, ուր կաշխատակցի Միուքիւն թերթին: Յետոյ կը մեկնի Եգիպտոս: 1897-1898 կաշխատի Պօղոս Նուպարի ագարակին մէջ իբրեւ հաշակալ: 1899ին կանցնի Փարիզ: Կաշխատակցի Գուլտոն Լուսինեանի Ֆրանսա - հայերէն բառգիրքին խմբագրութեան, յետոյ միջնորդ՝ հնարժէք առարկաներու, պահ մըն ալ պաշտօնեայ՝ արշաւի ձիերու հայթայթիչի մը մօտ: Կը մեկնի Վիէննա, աշխատակցելու Եռանդեքուի բառարանին, յետոյ Լոնտոն՝ դարձակցելու Նոր կեանքին, ապա դարձեալ Փարիզ՝ խմբագրելու Ազատ Խօսքը: 1902ին Եգիպտոս է նորէն, քանի մը տարի պաշտօնեայ՝ ձուլիչի մը մօտ: 1904ին՝ Հնդկաստան, իբրեւ ադամանդի վաճառական: 1905ին՝ Եգիպտոս, իբրեւ ձուլարանի պաշտօնեայ: Մինչեւ 1908, այստեղ կը հրատարակէ Ազատ Բեմ, Ազատ Խօսք, Արեւ, Կրակ, Օրէնք:

Օսմ. Սահմանադրութենէն յետոյ Պոլիս է: Կաշխատակցի Արե-

*) Դեկտեմբերին լոյս տեսաւ Ե. Օտեանի երկերի մէկ հատորը Նահատակ Գրքագէտների Բարեկամների հրատարակութեամբ (№ 9): Հատորը ամբողջապէս նւիրած է Փանջունիին. այդպէս էլ կոչուում է՝ «Ընկեր Փանջունի»: Այդ առթիւ օգտակար ենք համարում հատորից արտատպել Ե. Օտեանի գուտ փաստական տեղեկութիւններ պարունակող կենսագրութիւնը: ԽՄԲ.

ւելի, Ագատամարտի, Հայրենիքի, Բիւզանդիոնի, Շանքի, միա-
ժամանակ կը հրատարակէ շատ մը երգիծաթերթեր:

1915ին՝ կաքսորւի եւ կը հասնի Տէր-Զօր, ուր աւելածու է սլահ
մը, յետոյ թարգման՝ Թուրք սպայի մը մօտ, ապա՝ զերման սպա-
յի մը մօտ: Այստեղ կիսլամացիներն զինք եւ ուսուցիչ կը նշանակեն
Համայնի: Ժամանակ մը վրջ կը բանտարկեն:

Զինադադարին՝ Պոլիս է: 1919-1922 կաշխատակցի Ժամանակի,
Վերջին Լուրի, Ճակատամարտի: Քէմալական արշաւի առջեւ,
1922 Սեպտեմբերին կը թողու Պոլիսը եւ կանցնի Պուրքէշ: Կաշխա-
տակցի Նաւասարդին: 1924ին կը մեկնի Սուրիա, հիւանդ մօրեղբօ-
րը մօտ: Այստեղ կաշխատակցի Նոր Փիւնիկին ու Հայ Կեանքին:
Յետոյ կանցնի Եգիպտոս, ուր կաշխատակցի Արեւին, Հայկ. Սինէ-
մային, եւ ուր կը մեռնի 3 Հոկտեմբեր 1926ին:

Բեզուն գրող մըն էր: Ահա իր աշխատութիւնները. —

Ա. ՎԷՊԵՐ. — Սալիհա Հանըմ, 3 հատոր (1912), Թաղականին
Կնիկը (1921), Միջնորդ Տէր Պապան (1920), Դատաստանական հոր-
հուրդին առջեւ (1921), Մատնիչը (1920), Առաքելութիւն մը ի Ծա-
պրվար (1913), Ընկեր Փանջունի վասպուրականի մէջ (1914), Մի-
քէի սիրարկածը (1920), Ընտանիք, Պատիւ Բարոյական (Արեւելք),
Ես դրսեցի չեմ առներ (Ժամանակ), Թիւ 17 Խափէն (Վերջին
Լուր), Կանանց հովանոցով կիւր (Վերջին Լուր), Կաւէ հերոսներ
(Վերջին Լուր), Տարիքա (Վերջին Լուր), Ընկեր Փանջունի տարա-
գրութեան մէջ (Նաւասարդ), Հայ կուլտուրականները (Շաւիղ),
Հայ Տիարքորան (Արեւ), Ապտիւլ Համիտ եւ Շէրոք Հոլմս, Պատե-
րազմ եւ Խաղաղութիւն (Շանթ):

Բ. ՎԷՊԱԿՆԵՐ. — Վաշխառուն (Հայրենիք), Գործ եփող մը
(Հայրենիք), Ազգային բարերար (Շիրակ), Ոսկեմու (Շիրակ),
Գործի մարդիկ (Անահիտ), Մուլէտ (Անահիտ), Բարի դահիմը (Ա-
նահիտ), Մօսա Քլէսիմ (Անահիտ), Համբարձում աղա (Բանբեր),
Բրոքականտիսքը (Նոր Կեանք), Վառնաականի մը նամակները (Մա-
նան), Ճուղուպիսք եւ Ընկ. (Կառափնատ), Վարպետ Պողիկար-
պոս (Վերջին Լուր), Յեղափոխութեան Մակարոյժները (1920),
Ազգ. Երեսփոխաններ (Մանան),

Գ. ԹԱՏԵՐԱՆԱՂԵՐ. — Զարշուր Արքին աղա, Միջաշէլ Կիւրճ-
եանի աշխատակցութեամբ, (1906), Զավալլըն (1909), Սահմանա-
դրութեան 69րդ յօդւածը (1927), Վարդան Մամիկոնեան:

Դ. ԹԵՐԹԵՐ. — Մեծ մասը ինք հիմնած եւ խմբագրած է, մէկ
մասն ալ ընկերովի:

Ագատ Բեմ, չարաթաթերթ, Աղեքսանդրիա, 1903-1907, Ագատ

Խօսք, Փարիզ, 1901-1902, Աղեքսանդրիա 1906-1907, Թերթիկ, օրաթերթ, Աղեքսանդրիա 1906, լոյս տեսած է միայն 28 թիւ, Օրէնք, չաբաթաթերթ, Աղեքսանդրիա, 1905, լոյս տեսած է միայն 13 թիւ, Կրակ, չաբաթաթերթ, Աղեքսանդրիա 1906, լոյս տեսած է միայն 3 թիւ, Սեւ Կառու, չաբաթաթերթ, 7 թիւ միայն, 1912-13, Պոլիս, Մանանա, 1913-1914, Պոլիս, Արեւ, 1908, Գահիրէ, Կառափ-նատ, չաբաթաթերթ, 1919, Պոլիս, Իգնատ Աղա, չաբաթաթերթ, 8 թիւ միայն, 1919, Պոլիս, Շաւիղ - Իգնատ Աղա, չաբաթաթերթ, 1920-1922, Պոլիս :

Ե. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ .- Նահապետ Ռուսինեան (Մասիս), Ծերեմեց (Մասիս), Ֆիզիքա Պողոս Պատուելի (Մասիս), Գրիգոր Օտեան (Մասիս), Ս. Ժողովները (Հայրենիք), Իշխանաց Կղզիները (Արեւելք), Հին Խնդիրներ (Հայրենիք), Փարսիները (Ազատ Բեմ), Ժողովող (Շիրակ), Պողոս Նուպար (1913), Հայկական Խնդիր (1914) :

Զ. ՅԻՇԱՏԱԿՆԵՐ .- Տասներկու տարի Պոլսէն դուրս (Ժամանակ), Արիւնտ Յիշատակներ (Նոր Կեանք), Անիծեալ Տարիներ (Ժամանակ), Մանկութեան Յիշատակներ (Իգնատ Աղա), Գրական Յիշատակներ (Ոստան) :

Է. ՏԱՐԵՅՈՅՑՆԵՐ .- Ոմանց Տարեցոյցը, Աղեքսանդրիա 1909, Ապուշներու Տարեցոյցը, Պոլիս (1912), Երգիծական Տարեցոյց, Պոլիս, (1921-1922) :

Ը. ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ .-Արգասաւորութիւն, Զոլա, (1910), Յարութիւն, Թոլստոյ, Աննա Քարէնինա, Թոլստոյ, (1911), Նիք Քարքեր, չարք, Նաք Փինֆէրքոն, չարք, Մեռեալներու Տունը, Տաստայէվսքի (Հայրենիք), Անժ Փիքու, Ալեքս. Տիւմա (Հայրենիք), Տալիտ, Փօլ Պուրթէ (Արեւելք), Յովհաննէս Զմշկիկ, Կիւսթալ Շուսպէրթէ, (1914), Իշխանն ու Աղապուր, (Արեւ), Սուտին Իշխանութիւնը (Արեւ), Յակոբայ Զրիորը, (Արեւ) :

Թ. ՔՐՈՆԻԿՆԵՐ .- Անթիւ են իւր քրոնիկները, զորս կարտադրէր չաբթէ չաբաթ կամ օրը օրին, զանազան խորագիրներու տակ, - «Առուան տոմսակ», «Առուր պատշաճի», «Իրիկան տոմսակ», «Վերնատունէն», եւ այլն : Այդ քրոնիկները ցանցնած է Հայրենիքի, Արեւելի, Ազատամարտի, Ժամանակի, Վերջին Լուրի, Շաւիղի, Նոր Արշալոյսի, Նոր Փիւնիկի, Հայ Կեանքի, Արեւի, Շանքի, և այլուր :

Ժ. ՕՏԵԱՆ ՕՏԱՐ ԼԵԶԻՈՎ .- Օտեանի կարգ մը գործերը թարգմանւած են Փրանսերէնի, յունարէնի, թիւրքերէնի, ռուսերէնի եւ պուլկարերէնի :

Օտեան չունէր մշակուածի ճաշակը, այնպէս որ գրած է առանց

յատակագծի, առանց ձեւելու, յաճախ առանց ներշնչումի՝ եթէ կարելի է գործածել այս դասական բառը: Ահա թէ ինչո՞ւ, Օտեանի տաղանդը չափելու համար, անհրաժեշտ է աչքի առջեւ ունենալ իր ամբողջական գործը եւ յետոյ տաշել, անընդհատ տաշել՝ գտնելու համար կորիզը, ուր սլահաձ է անգուգական տաղանդ մը:

Սկեպտիկ դառն աւելը քիչ մը շատ կռտած էր իր ճաշակը, այնպէս որ պէտք է զարմանալ՝ երբ այս վաւերական եւ օժտւած երգիծաբանը կը ստորագրէ քիչ մը շատ անհամ տոմսերու տակ: Օտեան չուղեց երեւնալ կոճկւած, տաշւած, ջնարկւած, — իր վարդապետութեամբ՝ կեանքը յաճախ երկար մանրամասնութիւններու բեռ մը կը նետէ վրան ու կը ծածկէ աստւածային հուրը: Այդպէս են եւ իր ստեղծագործութիւնները, — արւեստի անմահ բաբախումը գտնելու համար իր գործերուն մէջ՝ դուք ստիպւած էք փորել այն դէզը, որ գոյացեր է էջ լեցնելու ցանկութեամբ: Իր տիպագրութիւնն ալ կը մատնէ այդ թէքնիքը: Որքան ալ անմահ ըլլան, իր հերոսները քիչ մը շատ կապւած են իրենց ժամանակին՝ մանրամասնութիւններու բեռով, զոր կառնեն օրւան կեանքէն:

Իբրեւ մարդ, եթէ հաւատաւոր մը չեղաւ, — հեգնական անտարբերութիւն մը, եթէ ոչ արհամարհանք, ցոյց կուտար զաղափարներու եւ իտէայներու պայքարին, — Օտեան միշտ պարկեշտ մնաց նկարագրով: Ոչ իր տաղանդը ծախու գրաւ, ոչ ալ պարծենցաւ իր տաղանդով: Համեստ էր հոգիով: Համեստ ապրեցաւ եւ կեանքով, մինչ կրնար բարեկեցիկ կեանք մը ունենալ, շնորհիւ իր ընտանիքին ընկերային դիրքին ու յարաբերութիւններուն:

Ն. Գ. Բ.

